

Փ Ո Ւ Ն Ձ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Գեր. Տ. Խորեն Ս. Արքեպիսկոպոս Նար-պէ, Լուսինեանի կողմանէ առ ամեն Ս. Պատրիարք Հայրն ուղղեալ գրութեան մը պատճէնն է :

Պէշիքթաշ 13 հոկ. 1879,

« Ամեն Պատրիարք Սրբազան Հայր, նախագահ Ազգային Կեդրոնական Վարչութեան խառն ժողովոյ,

« Բարձրագոյն իշխան Լուսինեանի որ անհայտ վաւերացրեալ զօրութեամբ ընդունուած է ի կայսերական կառավարութենէ անտի Ռուսիոյ, (ուր կընկի ի 1829է հետէ) իբրև սերունդ յուղիղ գծէ Լուսինեան թողաւորացն կիպրոսի, Երուսաղիմայ և Հայաստանի, պատիւ ունեցաւ իւր պաշտօնագրովն որ ի 19 հոկտեմբեր 1878 առ Չեղք Բարձր Սրբազանութիւնն յայտարարելով է ես և եղբարքն իմ սերեալ եմք ի հօրեղբորէնորա Ամօրի-Յովսէփ Նար Պէ, իշխանէն Լուսինեան, և թէ հետեւաբար ինքն կհամարուի մեծ հօրեղբայր մեր :

« Նորուն Արքայական բարձրութիւնն իբրև արդի զուտ մեր ազգատոհմին կ'պահանջէ որ և ես ստանձնեմ իմ գերզաստանին ընկի և պատմական Լուսինեան անունը զոր ինքը և եղբարքս կը կրենք Արք' ըստ որում մի և նոյն ազգատոհմի անդամաց կարելի չէ այլ և այլ մականուն գործածել, և ըստ որում իմ ևս անբռնաբարելի իրաւունքս է իմ հարցս ժառանգութիւն թողած մականունն ի կիր առնուլ, հետեւաբար և ես կըստիպուիմ Լուսինեան հայրենի անունս ստանձնել այսուհետեւ :

« Պատիւ ունիմ զոյն որոշումն հազորդել Ամեն տէրութեանդ ի գիտութիւն, մնալով

Ն. Ծ. Ի Քս.

Խորեն Արքեպ. Նար-Պէ Լուսինեան

Մեր և յունաց Պատրիարքարանաց համար Բ. Դրան հետ բանակցութեան առիթ եղող նոր խնդիր մ'երևան ելած է այս օրերս, և կիւրակէ օրը աւելի ծանր կերպարանք առաւ Բ. ու ժգնութեամբ, որ պարանները բրդան, և թէ' Հոյերը քարերով կուտեցան ստիկանաց հետ Չեմք կարծեր, որ յունաց Պատրիարքարանը եթէ ստուգէ յիշեալ քահանային այս վարմունքը անտարբեր գտնուի և շտաբինէ զարժանն :

Դրնէն հրաման ելեր է, որ Գան. ախլիի գերեզմանատան մէջ այսուհետեւ ննջեցեալ չթողուի, և ուրիշ տեղ մը սահմանուեր է. մերայինք և յոյնք որ միևնոյն գերեզմանատան մէջ կթաղէին իրենց ննջեցեալները՝ թաղելու համար որչեալ նոր տեղին հեռաւորութիւնն ու անյարմարութիւնը նկատելով՝ Պատրիարքարանաց դիմած էին առ ի պատշաճ տնօրինութիւն : Խնդիրն այս վիճակին մէջ եղած ատեն, կիւրակէ օրը յոյնք ննջեցեալ մը ունենալով կուղեն գիւղին բուն գերեզմանատան մէջ թաղել, տեղոյն ստիկանք կգիմադրեն, յոյնք ընդ որս և հայք կպնդեն, և կեղեցեաց զանգակներն զարնըռեւելով՝ երկու ազգէ բազմութիւն գերեզմանատան մէջ կխանի, և ստիկանք ու ժողովուրդն կկրուուին. բայց հուսկ ուրեմն անկարելի կըլլայ թաղել. ասոր վրայ ննջեցեալը կբերուի կղբուի գիւղին բնակիչներէն Պ. Հանսօնի տան առջև, սա պատճառաւ որ ժողովուրդն այնպէս գիտէ եղեր, թէ գերեզմանատանը Պ. Հանսօնի տան մերձակայ ըլլալով՝ նա կառավարութեան դիմեր և վերջապէս յաջողութե հոն ննջեցեալ թաղելն արգիւլել առաւ : Ոստիկանութեան նախարարն իմանալով սոյն անցքը՝ անձամբ յիշեալ գիւղն գացեր, և ննջեցեալը դիշեր ատեն Չէնկէլ գիւղի գերեզմանատանը զրկեր թաղել տուեր է, ըստ ոմանց՝ իւր անձնակառնէն մէկ լիւրս վճարելով դադաղը ստանդ նաւակին համար : Նախարարն միանգամայն բռներ ոստիկանութեան դուռը զրկեր է քանի մը հայ և յոյն, իբրև գրգռիչք կամ պարագլուխ վեճին, և տակաւին ուրիշներն ալ կլինտուուին եղեր :

Շատ զարմանալով լսեցինք, թէ զիւղին յոյն քահանայն բաւական ջանացեր է համոզել ոստիկանութեան նախարարն՝ մեր ազգայինները կուտոյն և խուսժութեան պատճառ յցունելու համար : Ըսեր է, թէ Հայերը գրգռեցին զյոյնս, թէ' Հոյերը եկան յունական եկեղեցւոյ դանդակն ալ հնչեցուցին այնպէս

ու ժգնութեամբ, որ պարանները բրդան, և թէ' Հոյերը քարերով կուտեցան ստիկանաց հետ Չեմք կարծեր, որ յունաց Պատրիարքարանը եթէ ստուգէ յիշեալ քահանային այս վարմունքը անտարբեր գտնուի և շտաբինէ զարժանն :

Աւտիկ, այսպիսի անցք մը տեղի ունեցած է կիւրակէ օրը ի Գանախլի, որոյ վրայ հարկաւ կպարտաւորի մեր Ս. Պատրիարքը Բ. Դրան և ստիկանութեան նախարարին հետ բանակցել, թէ' գերեզմանատան խնդրոյն կարգադրութեան և թէ' բանաարկելոց ազատութեան համար, և տարակոյս չկայ, թէ այս բանակցութիւնը անյայտ յաջող արգիւնք մը կունենայ, եթէ Յունաց Պատրիարքարանն ալ ինչպէս պարտի աշխատակից գտնուուի մեր Պատրիարքարանի : Սրգէն բազում դադմունք և հոգեր ունի մեր Պատրիարքարանը, կցաւիք, որ այսպիսի խնդիրներ ալ յաճախ պատահելով մեծապէս կըբաղեցունեն զմեզ :

Կարնոյ ազգայնոյ երեկոյններէն նըշկեան մեծապատիւ Յակոբ Էֆէնտիի՝ որ մայրաքաղաքս կը գտնուի, Եազմանեան մեծապատիւ Աւետիս Էֆէնտիի դուստր նաղելափայլ Գայանէ օրիորդի հետ ամուսնութեան հանգեսը կատարուեցաւ երկուշաբթի առաւօս վաղիւրջ շքով իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան Ս. Պատրիարք Հօր :

Նորին Սրբազանութիւնն այս առթիւ ալ այցելեց Սէլամիյէի Պէրպէրեան համբաւաւոր վարժարանը, Օտեան Էֆէնտիներու հետ, և հարցափորձեր ընելով գոհութիւն և շնորհակալութիւն յայանեցին :

— Կիմանամք, թէ Հիւանդանոցի մէջ մէկ աչքը կորուսանող պատանւոյն պարագայքն Հոգադարձութեան դիմելով՝ նորա ապագային համար փոխարինութիւն կպահանջեն :

Հիւանդանոցի ներքին տնօրէնը առ ի ծանօթութիւն յատկապէս

գրած է մեզ, թէ « պատանին մէկ աչքին բիրը կորսնցուցած է, իբրև վիրաբուժութիւն ուսանող առ ի փորձառութիւն, զրեխի մը դործողութեան ներկայ գտնուած ժամանակ, կաթիլ մը նորա մէկ աչքին ցատկած ըլլալով, և թէ' մէկ քանի օր չէ յայաներ բժշկաց և այս պատճառաւ ապա կարելի չէ եղեր դարմանել » :

Կրնամք նոյն իսկ սոյն ծանօթութեան վրայ շատ մը դիտողութիւններ ընել. բայց զանց կընեմք, խնդրելով յարգոյ տնօրէնէն և յայլոց պաշտօնատարաց, որ գթութեամբ վարուին Հիւանդանոցի մէջ գտնուողներուն հետ, և փոխանակ պակասութիւնները ծածկել կամ մեղմել ջանալով՝ զանոնք գործողները այդ յարկին մէջ վայրկեան մ'իսկ չպահեն : Տնօրէնը կամ վիրաբույժը՝ եթէ 11-12 տարեկան զաւակ մ'ունենային, թոյլ կուտային որ վիրաբուժական փորձառութեան պարագի, և գրեխի ծանր գործողութեան մը ներկայ, և մինչև իսկ աչքին ցատկելու չափ մերձ գտնուի . . . :

— Գոհութեամբ իմացանք, որ Արարատեան ընկերութեան գործադիր ժողովը Ս. Պատրիարք Հօր դիմելով՝ քննութիւն խընդրեր է վանայ վարժապետանոցին վրայ եղած ամբաստանութեան համար, պայմանաւ որ եթէ չկըրնայ հաստատել ամբաստանողն՝ պէտք եղած օրինական պատիժն ընդունի ազգային իշխանութեան կողմանէ : Շատ ազէկ ըրեր է գործադիր ժողովը, ինչպէս մեր նախորդ թերթովն դիտած էինք՝ այս մասին անտարբեր մնալն կըրնայ մեծապէս փնասել ընկերութեան յաջող ընթացից վասն զի ի պակասել հասարակաց վստահութեան ու համակրանաց՝ ընկերութեան գոյութեան տարրը կպակասի և ամենայն ինչ վեր ի վայր կըլլայ ի մեծ ուրախութիւն շարամնաց :

— Շարաթ օրը Ս. Պատրիարք Հօր անուան տարեգարձն ըլլալով՝ շնորհաւորութեան գացին ամեն կարգէ և ստիճանէ ազգայնոց բազմութիւն մը : Գլխաւոր նախարարն և ուրիշ նախա

բարձր յատկապէս պաշտօնակալ-
ներ ի շնորհաւորութիւն զրկած
էին առ Նորին Սրբազնութիւնն :

— Ազգային ժողովը նիստ ունի
առաջիկայ ուրբաթ օր, օրակար-
գըն ըլլալով՝ 1. — Խնդիր վերա-
քննութեան սահմանադրութեան՝
ի վերայ տեղեկագրի նախաձեռ-
նութեան դիւանի. 2. — Խնդիր
Ղալաթիոյ թաղեցոց՝ ի վերայ
տեղեկագրի մայր դիւանի :

— Յատկապէս յանձնարարեալ
է մեզ հրապարակաւ շնորհակա-
լութիւն մատուցանել ընկի Մի-
ջագիւղցի բայց այժմ էտիոնէ
գտնուող արժ. Տ. Արսէն քահա-
նայի, որ պօլսեցի պանդուխտ
աղագայնոյ մը յուզարկութեան
թեան հանդէսը կատարելէն զատ
գոյքն ալ առեւ պահեր, և երբ
նորա ծանօթները իրեն դիմեր
են, ամբողջապէս յանձներ է,
և թաղման համար իրեն տրուած
գրամն ալ չէ ընդունել վեհանձ-
նաբար : Արժ. Տ. Արսէն քահա-
նայն այսպէս լռելայն յանդի-
մանած կըլլայ մեր այն քահանայ
Հայրերն, որոց բոլոր մտածու-
թիւնն է՝ ժողովրդէն ստակ կոր-
զել, առանց բնաւ ուշ դնելու
իրենց սրբազան պարտեաց ու
պաշտաման : Տ. Արսէն քահանայն
իւր այս վարմանցն համար ոչ մի-
այն հրապարակական գովեստի
ու շնորհակալեաց արժանի է,
այլ և Ս. Պատրիարք Հօր եկեղե-
ցական վարձատրութեան :

— Մինչև ցայսօր Բ. Գրնէն
վաւերացման հրամանագիր ելած
չէ՝ ըստ ազգարարութեան Բ. Գր-
րան, Հակահասունեանց ընտրած
վարչական ժողովին համար : Գրն-
թէ ամեն օր յիշեալ ազգայնոց
կողմանէ կերթան և թախանձա-
նօք կպահանջեն :

— Մեր վերջընթեր թերթով
Բարթող Սուրի նկատմամբ հրա-
տարակեալ նամակին գլուխը
« Արապկիրէն » ըսուած է սխալ-
մամբ, փոխանակ « Պօլսէն » ըս-
ուելու :

Ա. Ձ. Գ

ՊԵՐՊԵՐԵՍՆ Վ.Ա.ԲՄ.ՐԱՆ

Վարժարանիս աշակերտաց ա-
բադ արագ աճող թուոյն առջև
մեր դեռ անցեալներն վարձած
ընդարձակ շէնքն այլ անբուա-
կան լինելով՝ ստիպուած էինք
ժամանակէ մ'իվեր նոր աշակեր-
տաց ընդունելութիւնն դադարեց-
նել :

Այժմ պատիւ ունիմ ծանու-
ցանել որ՝ վարժարանիս շէնքին
հետ միացուցած ըլլալով կից ե-
ղող Օտեանց մեծ տունն այլ յա-

ռաջիկայ նոյեմբերի սկիզբէն
պատրաստ եմք ընդունելու նոր
աշակերտներ թէ գիշերօթիկ և
թէ ցերեկեայ :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵՍՆ

1879 հոկտ. 13

Իւսկիւտար-Սէլամաբլ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Գրեթէ ամեն տէրութիւն ա-
զատ չէ ներքին ու արտաքին
խնդրոց զբաղմունքէ, բայց զըժ-
բազդաբար բազում և բազմազան
են մեզ տիրող կառավարութեան՝
Թուրքիոյ զբաղմունքն : Հելլե-
նական, գանձային, և բարենո-
րողմանց հանրածանօթ մեծ լըն-
դիրներն դեռ չկարգադրուած,
ժամանակէ մը հետէ մոխրոյ տակ
գտնուած կուսիսա և իւրաքանչիւր
զաքաղաքաց խնդիրն երևան ե-
լած է այս օրերս : Գարստազի
կառավարութիւնը Բ. Գրնէն կը
պահանջէ՝ այս տեղերը պարպել
և յանձնել իրեն, և Բ. Գրնը
յանձնել պարտի ըստ գաշնագրին
Պէրլինի. սակայն բնակիչք ար-
նուած իսլամ և ընդհանրապէս
զինուց ու կռուոյ մարդիկ ըլլա-
լով չեն ուզեր Գարստազի կա-
ռավարութեան ներքև մտնել, և
ահա աստեք էին, որ զիրենք հա-
մոզելու գացող Մէհմէտ Ալի վա-
չան չարաչար սպաննեցին :

Անգղիոյ զբաղմունքն ալ շատ
են : Արդարև յազմանակաւ Բեա-
պիլ մտաւ, և սկսաւ ի կախողան
բարձրացունել դեպքանական
մարմինն սպաննողներն ու նոցա
մասնակցողները. սակայն չկար-
ծուիր, որ այսչափով վերջա-
նայ և ուղածին պէս խաղայ այդ-
երկրին մէջ. որովհետև ունի իւր
դէմը զՌուսիա, որ կեդրոնական
Ասիոյ մէջ բարձրագլուխ հանդի-
սանալու համար դրամ ու արիւն
չլինայէր, որ երբ փոքրիկ պար-
տութիւն կամ ձախողուած մը
կրէ՝ առաւել թափով կ'յարձակի
և կտապալէ կիւրջէ ամենայն զօ-
րութիւն, մանաւանդ երբ դիմա-
ցը գանուողը անպետ, անզուխ
և ցիրուցան Թուրքմեններն ըլլան :
Անգղիոյ դէմ կենէ այս օրերս
Պոյէր ըսուած ցեղին ապստամ-
բութիւնն ալ, որ բոլորովին ան-
նըչան չկարծուիր : պարտաւոր-
եալ է զօրք հանել այս ցեղին վը-
րայ, և ի հնազանդութիւն ածել :
Միւս կողմանէ Պիրմանիս մ'ալ
կայ, որոյ մայրաքաղաքը դոնուած
անգղիական դեպքանը ենել
հարկադրեցաւ՝ Բեապիլի կոտո-
րածին վրայ, տեսնելով որ Պիր-
մանիոյ ժողովուրդն ու կառա-
վարութիւնը բարեկամ չեն Անգ-
ղիոյ : Չմոռանք Անգղիոյ ներ-
կայ նախարարութեան ընդդիմա-

դիր մասին անդադար դիտողու-
թիւններն, ու բուն ճննարարու-
թիւնները, և իրանտիոյ երկրա-
գործ ժողովրդեան գանդամներն
ու սպանալիքն, որ մեծ տագ-
նապ կպատճառեն կառավարու-
թեան : Իրանտիոյ մէջ այս օրերս
հասարակաց ժողով մը դուսարեր
է. 20 հազար հողի ներկայ դըտ-
նուելով, և ի նկատի առնելով
ներկայ տարւոյ բերոց տարապայ-
ման նուազութիւնն ու սովու եր-
կիւղներն, որոշեր են քիչ դրամ
տալ հողատերոց, և եթէ չըն-
դունին, ոչ դրամ տալ և ոչ հո-
ղերը տէրերուն դարձունել :

Սպանիոյ մէջ երբ թագաւորին
ամուսնութեան հանդիսին պատ-
րաստութիւններն կըլլան, և անգ-
ղիացի հոչակաւոր տիկին Նիլըն
թատերական 12 ներկայացմանց
համար 90 հազար ֆրանք վարձ-
քով Սպանիա կհրաւիրուի, միւս
կողմանէ Գուպայի ապստամբու-
թիւնը կշարունակէ, և կառա-
վարութիւնը կհարկադրի միշտ
զօրք զրկել ապստամբաց վրայ :

Ա.Յ.Լ.Ե.Ի.Ա.Յ.Լ.Բ

Այսօր ալ նախարարաց ժողով
կգումարի Բ. Գրնը, և շատ
հաւանական է որ դարձեալ գան-
ձային խնդիրն ու շարքութեան
պիտի առնուի : Ընդհանրապէս
կկարծուի, թէ այսօր կորոշուի
արտաքին պարտուց համար 400
ին 1 կամ 2 ի չափ գումար մը,
փոխարէն ցցունելով՝ Արևելեան-
Բուսիոյ հասոյթէն 240, Կիպ-
րոսէն՝ 100, ծխախոտի մենավա-
ճառէն 900, գրոշմի տուրքէն՝
400, և բաթէնթի տուրքէն՝ 300
հազար լիրա : Այսպէս 2 միլիոն
լիրայէն աւելի յատկացած կըլ-
լայ կլսեմք, թէ Բ. Գրնը կը
հաւանի, որ պարտատեարց ու-
ղած եղանակաւ գանձուին ու
բաշխուին այս հասոյթները :

— Մօտերս կառավարութիւնը
որոշած էր որ գաղղիական լեզուն
չգործածուի դատարանաց մէջ :
Այս անգամ բարեփոխուեր է
սոյն որոշումն՝ նկատելով որ Բ.
Գրնըն ալ կգործածէ արտաքին
թղթակցութեանց համար :

— Հեռագրի և թղթատարու-
թեան համարակալ Նազիֆ պէյ և
Միւսթաֆա Բէշտա էֆենտի առ-
ժամանակեայ կերպիւ պաշտօն-
անկ եղեր են, Կերէի, թէ իրենց-
մէ հարցուելիք բաներ կան :

— Ի բացակայութեան անգ-
ղիական դեպքանին փոխանորդ
գտնուող Պ. Մալթի Նիպոտի
ընդհանուր հիւպատոս անուան-
եալ ըլլալով, մօտերս պիտի ու-
ղուորի :

— Ներքին գործոց նախարար
Մահմուտ Նէտիմ վաչա կիւրա-

կէ օրը այցելութեան դնաց գաղ-
ղիական, անգղիական, իտալա-
կան, ռուսական և գերմանական
դեպքանաց : Նորին վսեմութիւնը
մէկմէկ ժամէն աւելի տեսակցեր
է գաղղիական ու անգղիական
դեպքանաց հետ, ըստ բաղձանաց
նոցին :

— Հունգարացի Գլուխա զօ-
րապետին կողմանէ Ասիոյ երկա-
թուղոյն համար մատուցեալ ծը-
րագիրն ընդունուեր է : Բոլոր
պայմաններն դեռ յայտնի չեն,
բայց կըսուի թէ մինչև եօթը
տարի շինուած լինցած պիտի ըլ-
լայ մինչ Պաղտատ :

— Սուրիոյ կուսակալ Միտհաթ
վաչա արդարև հրաժարեր և
գիւրին պաշտօն մը խնդրեր է,
պատճառելով թէ արդի պաշտօ-
նը չկրնար վարել իւր այս տարի-
քին մէջ. սակայն Օղոստ Սուլ-
թանը փափաք յայտներ է որ
առ այժմ շարունակէ պաշտօնը :

— Տիրանակերտի դատական
ըննիչ Ֆէրիտ պէյ այսօր մայրա-
քաղաքէս կուղևորի ի Հայէպ,
և անտի իւր պաշտօնատեղին :

— Ըստ յանձնարարութեան Բ.
Գրան, պուլհարաց Էկզարքն Ֆի-
լիպէէն Սօֆիա գացեր է. Պուլ-
ղարիոյ իշխանէն խնդրելու հա-
մար որ պաշտպան կանգնի մահ-
մետականաց իրաւանց :

— Օղոստ Սուլթանը իւր թիկ-
նապահներէն Սիւլէյման և Ալի
պէյերը Պրուսայի նահանգը զըր-
կեր է՝ գաղթականաց վիճակը
քննելու և ուղղակի իրեն տեղե-
կագրելու համար : Սուքա այժմ
Միխաիլի և Պանսարմայի կողմերը
կպանուին :

— Ըստ որոշման քաղաքապե-
տութեան, երէկու ընէ սկսեալ,
հացին օխային գինն եղաւ 85
փարայ մէծիտ, և 95 փարայ
մէծալիք : Սիմիտիի փուռները
ըստ սովորութեան 10 փարայ
պակաս պիտի տան :

— Ելեմտիոյ նախարար Էտիպ
էֆէնտիի հրաժարման լուրն ան-
հիմն է :

— Հելլենական խնդրոյն յանձ-
նած ժողովն՝ այսօր դարձեալ կը
գումարի :

— Արևելեան-Բուսիոյ կուսա-
կալ Ալէքօ վաչա այս անգամ
նահանգին մէջ շրջագայութեան
եղած ատենը, ոչ միայն դարիա-
դով է եղեր, այլ և ռուս գին-
ուորական հանդերձով, Ֆիլիպէ
դարձած օրը մեծ հանդիսիւ ըն-
դունուեր է, բայց ծանր դէպք
մը տեղի ունեցեր է. — պուլղար
սպայակուտի թիկնապահներէն
մէկն իւր մեծին առջև անքաղա-
քավար վարմունքի մէջ գտնուած
ըլլալով, Ալէքօ վաչա այնչափ
զայրացեր է որ ուժղին ապտակ

մ'իջուցեր է երեսին . ասոր վրայ՝ թիկնապահն իսկոյն ժողովրդեան մէջ փախեր է :

— Զինուորական գործոց նախարարը թիկնապահ մը զրկեց՝ Զաթալճայի ամրութիւններն ու ամրութեանց երկայնութեանը շինուելու վրայ եղող երկաթուղին աչքէ անցունելու համար :

— Պօլոյ քաղաքապետ Քիզապէյ կառավարիչ Բ. Գրան, որ կամուրջներուն հասոյթն սյուսահեռե քաղաքապետութեան յատկանայ, փոխանակ ծովային պաշտօնատան :

— Նիկիտէի կողմերը 150 էն աւելի ճանբորդաց կարավանի մը՝ 9 չէրքէաներէ կողդատուած ըլլալը զարմանօք կ'պատմուի :

— Պրուսայի նահանգին մէջ ափիննի մշակութիւնը յառաջ տանելու նպատակաւ, ըստ հրամանի Սգոտտ Սալթաի՝ այսուհետե ափինն մշակողներէն մինչև երեք տարի տասանորդ չպիտի առնուի :

— Եզրիպտոսի իշխանութեան կողմանէ Հապէչաց թագաւորին դրկուած կորստն փաշա հասնելով Հապէչատան, յարգանօք ընդունուել է թագաւորէն, կհաստատեն, թէ առանց արիւնհեղութեան պիտի վերջանայ խընդիրը, որովհետե Հապէչաց թագաւորն ըսեր է, թէ ինքը եզրիպտոսէն երկիր գրտելու ելած չէ, այլ կ'փախարի փոխարութեան համար ճանապարհ մ'ունենալ ծովու կողմանէ, և թէ՛ ուրիշ ամեն պահանջք ի բաց կ'ըսուի, եթէ այս փախարանայն հասնի կորստն փաշա ընդունել է սոյն առաջարկութիւնը, սակայն դեռ յայտնի չէ պայմանագրի մը ըստորագրուած ըլլալը :

Պուլշարիոյ ազգային խորհրդարանը քիչ օրէն կրացուի ի Սօֆիա : Նախարարութեան կողմանէ օրինական բաղում ծրագրեր պիտի ներկայանան, որոց զլիսաւորն է պանքա մը հաստատել՝ կալուած յապահովութիւն առնելով դրամ փոխ առու համար, և համալսարան մը բանալ, զինուորական վաշտերն աւելցունել, և Սօֆիայէն մինչև Զիլթովա ու Րուսուգ երկաթուղի ու շոսէ շինել, և եւրոպական տէրութեանց քով թոշակաւոր գործակատարներ կարգել :

— Ռուսիա այս անգամ պատերազմական նաւ մ'ալ ընծայել է Պուլշարիոյ, որ վարնայի առջև պիտի կենայ, Ասկէյ զատ, Պուլշարիոյ իշխանութիւնն ալ երկու պատերազմական նաւ պարպեր է նիքայէֆի նաւարանին, և միանգամայն որոշեր է

ծովային վարժարան մ'ալ հաստատել : Անցեալներն երբ Ռուսիա քանի մը փոքրիկ նաւ ընծայեց Պուլշարիոյ, տէրութեանց տնտեսք զիտողութեան ելան. սակայն կերի թէ Ռուսիոյ առարկութիւններն իրաւացի դատուած են, մանաւանդ որ Պուլշարիա նաւատորմի ունենալու իրաւունքէ զրկող որեւէ տրամադրութիւն չկայ Պէրլինի դաշնագրին մէջ :

— Գարատաղի կառավարութիւնը ամենայն փութով կաշխատի՝ երկրին մէջ ճանապարհաց շինութեան, և՛ կրթութեան ընդհանրացման համար :

— Գարատաղի իշխանը պատուանչան ընծայել է Պանա-Հէրոսէքի աւստրիական հրամանատարին, Զէթիէն գտնուած ժամանակը :

— Երկրի կայ, թէ այս տարի Հունգարիոյ մէջ սով պիտի ըլլայ, ի Քեապիլ, ամսոյս 3ին, 11 հոգի մեռեր են քոլէրայէն :

— Եզրիպտոսի նախորդ խտրիկն Մահմատ պէյ որդին՝ Փարիզ գացել է :

— Սերպիոյ իշխանը պատուանչան և չքաղբամ ընծայել է Րուսիայի իշխանին :

— Հռուսիոյ Պապը՝ մօտերս Աքրեպիսկոպոս մը իբրև նուիրակ պիտի դրկէ ի Պուլշարիա :

— Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ այս օրերս սաստիկ ցուրտ կայ : Վիէնայի շրջակայքը և ուրիշ տեղեր շատ ձիւն եկեր է :

— Սերպիոյ կառավարութեան կողմանէ երկու պաշտօնակալ զրկուել են Փարիզ, տեղոյն փոքրանոցին մէջ Սերպիոյ համար պատրաստուել սակի ու արծաթ դրամներն առնուլ Պէլլրատ բերելու պաշտօնով, Հին գրամներն պիտի ժողովու ին շրջաբերութեանն է :

— Քեապիլի Պալա-Հիստորի մէջ օգը երնող վառարի շտեմբարանայ մէջ 860 հազար փամփուշտ, մեծագումար վառար և շատ մը տանգիւտը հրացան կայ եղեր : Եյս պատահարին զոհ գացեր են 32 անգղիական զօրք ու 2 ըսպայ և բազմաթիւ աֆղանք :

— Կրսեն, թէ Պէրլինի դաշնագրին հաստատութեանն յետոյ Ռուսիոյ կառավարութիւնը իւր զինուորական զօրութեան վրայ 400 հազար հոգի ալ աւելցունենելու համար պէտք եղած կարգադրութիւններն ըրեր է արդէն, և թէ՛ Գերմանիոյ սահմանադրի մօտերը ունենալիք այրուծի միջոց կրնայ երեք աւուրց մէջ Ռուսիոյ արեւելեան նահանգներն հասնիլ :

— Զուլուներուն թագաւորը՝ որոյ անգղիացուց ձեռքը իյնալը

յայտնի է, սկսեր է եւրոպական զգեստ հագնիլ, և կերևի թէ մօտերս Լանարա պիտի բերուի՝ անգղիական մեծութիւնն ի մտայ տեսնելու համար, որուն շատ կը վախարքի եղեր :

ՀՅՌԱԳՐԱԼՈՒՐԻՐ

Լոնտրա. 28 հոկտ. — Ծովապետ Հօրնպիլի հրամանն ներքև գտնուող անգղիական նաւատորմին՝ Տաճկաստանի ջուրերը դառնալու հրաման ընդունել է :

Մթանաարտ դրած է, թէ Անգղիոյ կառավարութիւնը որոշած էր, որ Գանատահար բնակի իւր դեսպանը, բայց էմիր Եագուպ Խանի թախանձանոց վրայ Քեապիլ գնաց : Այս ծանօթութիւնը կուտայ, ի պատասխանի ազատականաց այն դիտարութեան թէ՛ ի Քեապիլ դեսպան զրկուելով, ծանուցեալ կոտորածին տեղի տրուեցաւ :

Վիէնա. 28 հոկտ. — Անհիմն կելնէ վիէնայի լրագրաց ոմանց այն լուրը, թէ Գարատաղի զօրաց ու արնաւորներուն միջ կ'ուի մը տեղի ունեցած է : Գարատաղի իշխանութիւնը ետ առաւ իւր զօրաց յառաջադրութեան համար տուած հրամանը, որովհետե Բ. Գուռը ծանոց թէ՛ Պէրլինի դաշնագրով որոշեալ տեղերը մտնելու դիւրութիւն պիտի տայ դարատաղացուց :

Լոնտրա 27 հոկտ. — Անգղիոյ կառավարութիւնը Ռուսիոյ բացատրութիւններ տուել է՝ Աֆղանստանայ քաղաքականութեանը վրայ, և ծանուցել է թէ՛ դաշնագրութեամբ որոշեալ սահմանը Հնդկաստանի ապահովութեան համար բաւական չէ : Այս սահմանը ընդարձակելով՝ Գանատահար ալ շրջապատանի հետ պիտի միանայ, բայց Աֆղանստան չպիտի միանայ : Այս երկրին համար էմիր մը պիտի դրուի, ընտրութեամբ Անգղիոյ :

Ծովապետ Հօրնպիլի տրամադրութեան ներքև գտնուող անգղիական նաւատորմին՝ Մալթա հասաւ :

Սօֆիոյէն հեռուորուած է, թէ բազում ուսս սպայք Պուլշարիա կուգան զինուորական կարգադրութեան համար, և թէ՛ սոքա Ռուսիոյ զինուորական ծառայութեան հրատարած են :

Աֆղանստանայ բարձրաստիճան պաշտօնակալներէն հինգ հոգի կախուեցան ի Քեապիլ, ապացուցուելով թէ մասնակից գտնուած են անգղիական դեսպանին ու պարագայից սպանման :

Պէրլին 27 հոկտ. — Պապական կըղերակալնք ժողով մը գումարելով և նկատելով, որ քաղաքական ամուսնութիւնը կրօնական ամուսնութեան ազդեցութիւնը կ'ընչէ, որոշել են կառավարութեան ծանուցանել, որ քաղաքական ամուսնութիւնը վերնայ, և միանգամայն կերակէ օրերը սուրբ պահուի, և թէ կըրին օժանդակութեան արժանանալ կուզուի :

Աւստրիոյ և Գերմանիոյ մէջ որ և է դաշնագրութիւն ստորագրուած չէ. միայն քանի մը քաղաքական բանակցութիւնք տեղի ունեցած են, և երկու կայսերաց հաւանութիւնն ստացած են ի վիէնա Պիզմարք իշխանին տնօրինած միջոցներն :

Պուրէշ 26 հոկտ. — Ծերակոյտն որոշեց, որ անմիջապէս իբրև քաղաքացի Րուսիոյ ընդունուին 888 հրէայք, որոնք վերջին պատերազմին ժամանակ ծառայութիւն մը մատուցած են կառավարութեան :

Ի Լ Ա Ն

ՊԱՊԸ—ՍԷՐԱՍԳԷՐԻ

Նիղամիյէ էլպիսէ անպարը մալի օլարագ մէվնուտ օլուպ Ֆիրուիթ իտիլէճէք օլան երկիրմի պին գըյէյէ գատար աթիք մահլուլթ բամուղըն էսմանը սիմ մէճիտիյէ երկիրմի զուրուչ հէսապը իլէ նագտէն վէ փէչինէն բամուղը գալըրմաղուան էվվէլ վերլմէք իւզէրէ պէհէր գըյէսի իքի զուրուչա թալիպի էօհտէսինտէ օլուպ իչպու թըրիի էվվէլը բուսինին երկիրմի իքինճի փաղար իրթէսի կիւնի թէքրար պիլմիղայէտէ գարարը գալթիսի վերլէճէկինտէն իշթիրասընա թուիսլ օլանլարըն եէվմի մէզբիւրտէ Տարը—Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի իլան օլունուր :

Պապը—Սէրասքէրի

16 թըրինի էվվէլ 1879

Նիղամիյէ սարաճխանէ անպարընտա մէվնուտ օլուպ Ֆիրուիթ իտիլէճէք օլան օթուզպիր գալմ զէսուլէ վէ սալթիյան փարչա վէ գըրիքընըլէրի իլէ քէօհնէ էչէայի սայիրէին պահասընը սիւլիւսի սիմ մէճիտիյէ երկիրմի զուրուչա օլարագ նագտէն վէ փէչինէն վէ սիւլիւսանը տալիս եինէ սիմ մէճիտիյէ երկիրմի նիղամիյէ խաղինէսի էչէսաը պահասը սուրէթի օլարագ փէչինէն վերլուպ պատէհու գալարըմագ իւզէրէ Ֆիլիթ մալիւմլէրի իլէ թալիպի էօհտէսինտէ գալմագ վէ իչպու թըրինի էվվէլը բուսինին երկիրմի իւչինճի սալը կիւնի թէքրար միւղայէտէսինին իճրասը մուգարիէր պուլունմուչ օլմաղլէ թալիսլ օլանլէրին եէվմը մէզբիւրտէ Տարը—Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի իլան օլունուր :

Պապը—Սէրասքէրի

16 թըրինի էվվէլ 1879

Ա Ձ Գ

Մայրաքաղաքիս և գաւառաց մէջ փունջի բաժանորդագրութեան հաշիւ ունեցողներէն կը խնդրուի, որ բարեհաճին վճարել անյապաղ :

Իւսկիւտար, Տաղ-Համամը 14 թիւ, թէլլալ Լուսիկի տունը քանի մը ընտիր կաթնտուք կգըտնուին : Պէտք ունեցողը կհրաուելու յիչէալ տունը, և տեղեկութիւն առնուլ :

Ձարհանք

Գաղղիոյ մէջ մարդ մը իւր սիրահարին հետ քաղաքականացէս ամուսնանալու համար արձանագրութեան դիւանը երթալով, երբ քարտուղարը, ի մէջ այլոց, կրսէ թէ կինը պարտաւորեալ է միշտ իւր ամուսնոյն դայցած տեսը երթալ, « ո՛չ, կրսէ խկոյն կինը, այդ կէտը ինծի համար ջնջէ, որովհետեւ ամուսինս թողութատարութեան ցրուիչ մ'ըլլալով, չեմ կրնար միշտ անոր հետ գտնուիլ:»

Աղնուական մէկը տանը մէկ սենեակին մէջ քանի մը հիւրերու հետ նստած ատենը, 2-3 տարեկան մանկիկն խոթու դէմքով մը ներս մտնելով « Հայրիկ, խընամածուս մօրս երեսէն համրոյր առաւ » կրսէ, և հայրը լսելով զայս մանաւանդ հիւրերուն քով ինչ ըլլալն ու ինչ ընելիքը չզիտնար, Հիւրերէն մէկը՝ որ շատ խելացի է եղեր, խկոյն քաղցրութեամբ թեւերը աղեկին մօտեցունելով, « որ երեսէդ պագաւ, ըսէ, որ սրբեմ » կրսէ և թաշկինակը կհանէ. — « Ահա այս երեսէս, » ըսելով այտերուն մէկը կցուցնէ, և ասոր վրայ հայրը շունչ կառնու և կարծես դարձեալ աշխարհ կուգայ: Մանկիկը սովորած է եղեր, այտերուն մէկը մօրը, խկ միւսը հօրը պագայունել, և օտարին չմերձեցունել: Խնամածուն մօրը յատկացեալ այտը պագած է եղեր:

Մէկը իւր բարեկամին տունը տեսութեան դայցած ըլլալով նորա փոքրիկ տղեկը ծնկանը վրայ առած, վեր վար ցատկեցունելով զուարճացունել աշխատած ատենը, « կվախնամ, կվախնամ, շատ մ'երբերցուններ » կրսէ տղեկն, և երբ մարդը « մի՛ վախնար, մի՛ վախնար, ես դքեզ չեմ ձգեր » կպատասխանէ, տղեկը կյաւելու թէ « շատ կվախնամ, որովհետեւ երէկ ալ էշէն ինկայ »:

ԴՐԱՄԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
16 Հոկտեմբեր 1879

| | |
|-----------------------------|-------|
| Քոնստիտուտ | 12-20 |
| Սօսիէթէ Ժէնէրալի բաժ. Ա. 1. | 4-28 |
| Քրէտի » » 0. 1. | 5- |
| Երկաթուղեաց » ֆր. | 42- |
| Թրամուէյ » 0. 1. | 4-15 |
| 1865ի վոխասութիւն » ֆր. | 65- |
| 1865ի » » » 68- | |
| 1869ի » » » 67- | |
| 1872ի » » » 21- | |

Օսմանեան լիրան 100 դուրուշն

| | |
|---------|--------|
| Մէճիտիէ | 106-15 |
| Մէթալիք | 117- |

| | |
|----------------|-------|
| Պղինձ | 400- |
| Թղթադրամ | 747- |
| Բուսիոյ բօլ | 90- 2 |
| Գաղղիական լիրա | 87-8 |
| Անգղիական » | 109- |
| Գրիմից | 51- |

ԱՐՀԵՍՏԱՐԱՆ

Պէտրոլու, Թագսիմի մօտ,
Վալիտէ շէշմէի թ. 55

Տէլէմակ էֆէնտի Մ. Էքսերճեան՝ որ հռչակաւոր հանդիսացած է դժադրութեան այլ և այլ ճիւղերուն մէջ ունեցած ճարտարութեամբը, չափաւոր վարձով աշակերտ կընդունի իւր արհեստարանին մէջ: Ձինքը տեսնել ուղղիւնը, Եշ. Ուր. և կիւրակէ կէս օրէն վերջը կը գտնեն: Կենդանագիր ալ կը շինէ չափաւոր գնով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ
ԱՐԱՐԱՏՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ն. ՏԵՐ ԴԵՒՈՆԻԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ
ԱՅՔԵՆԱՐԱՆ ԵՒ ՍԿՔԵՍԿԱՆ
ԸՆԹԵՐՏԱՐԱՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Ա. ՏԱՐԻ
(Եօթներորդ տարւորութենէն սրտասպում)
1 8 7 9

Մայրենի լեզուի առաջին մասը որ Պօլսոյ աշխարհագրութիւնը արձուցնող հրատարակուած է այսօր, արդէն Ռուսահայոց դպրոցներու համար մինչև Եօթներորդ տարւորութեան հասած է: Ընտիր գործ մ'է չորս տարուան ընթացքի բաժնուած, որք հետը հետէ պիտի հրատարակուին: Մեծապէս կրնայ օգտակար լինել ազգային վարժարանաց:

Կեդրոնատեղին է Արարատեան ընկերութեան գրասենեակը, Կալաթա կէօղէ-օղլու խան թիւ 13. կը գտնուի նաև Հայ գրավաճառաց քով: Գին 3 դահեկան արժ.:

ԲՍՏԱՏՐՈՒԹԻՒՆ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԻ
Ա. ՏԱՐԻՈՅ

Վերոյիշեալ դասագրքին բացառական ձեւնարկին է որ կը ծառայէ գլխաւորաբար ուսուցիչներու և ծնողաց դորձածութեան: Գին 7 դահեկան արժ.:

ՄՏԱՄԱՐՉՈՒԹԻՒՆ
ԸՍՏ ԲԷԼԻՍԻԷԻ

(Մայրենի «5») ՄԱՍՆ Բ.
Պատուութիւն և տրամախոսութիւնք
Իրաց և էակաց վրայ օրինակը և նիւթը բերանացի և գրաւոր

հրահանգաց 7էն 10 տարեկան տղայոց համար:

Թ. ԹԷՐԶԵԱՆ

Սոյն գրքոյի Ս. մասը մեծ ընդունելութիւն գտած ըլլալով, Բ. մասն ալ իւրոյ ընծայեալ է այս անգամ. հեղինակը լաւ ընտրութիւն ըրած է և շատ յարմար է Ազգ. վարժարանաց մէջ իբր գրասագիրք գործածուելու: Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով ի գին հինգ դուրուշ:

ՃԱՇԱԿ

ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Ծաղկաբաղ յաշխարհիկ լեզուէ
Հանդերձ գրական, պատմական, կենսագրական և այլ ծանօթութեամբք:

Աշխատասիրեաց

Ա. ՊԵՐՅՐՅԵԱՆ
Կծախուի ամեն գրավաճառաց քով, նոյնպէս գրավաճառ Պօղոս աղայի խանութը և Բերա Պ. Վայսի գրատունը:
Գինն է 10 դրշ արծաթ: Ծատ առնողին զեղջ կըլայ:

ՄԻ ԿԱԹՈՒՆ ԱՐՏՈՒՐ
ՁՈՐ ԿԸ ՀԵՂՈՒ

ԱՐՏՈՒՐ ԿԸ ՀԵՂՈՒ
Հեղինակին անցեալ տարի տարեդարձի առթիւ խօսած ասեանախօսութիւնն է, ուր, պատերազմի ատեն, Հայ աշխարհի աղէաներն կը պատկերանան ընթերցողին առջև մի ազգու կերպարանով:
Սոյն գրքոյին օգտակարապէս կրնայ կարգացուիլ ամէն ազգայիններէ, ուրց քաջաբերութեանն իրաւամբ արժանի է երկտասարդ հեղինակն:

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով գին 2 1/2 դրշ արծաթ:

ԳՍՍՍԳԻՐԻՐ

ՄՐԱՅՈՒՆ ՊՍՏՄՈՒԹԵԱՆ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ
ի պէսա գպրոցաց
ԱՌԱՆՁԱՐ
Երկրորդ տպագրութիւն
Գրատուն Վ. Յ. Մարդարեան
Մէրճան չարչը թիւ 17
Գին 3 1/2 դահեկան

Սոյն դասագիրքը կպարունակէ հին և նոր կասկարանի պատմութեան կարևոր մասերը. այսնը պատակաւ ջանացուած է ըստ կարի ամբիտի և դիւրուսանելի ընել զայն տղայոց, սրոյ յաջողած լինելուն տպացոյց մ'է քիչ ժամանակի մէջ հաշարաւոր օրինակաց սպառումն:

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՍՏՏԻ ՀՈՒՂԱՍՏԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը. նար ջըպլին տկարութեան, ուժաթափութեան և տկարութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը: Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանդարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը գորայնէ: Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցուեր կը վանէ, մարտդութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն ազանդութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց ըսկըզնսպատմու կըլլան, առողջ ուժեղ և բնական վերքը կը գտնուի:

NGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒՂԱՍՏԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պարամանական յատկութեանցը շհաստարի բնաւ ուրիշ դեղ մը, հին կամ նոր թունուոր վէրքեր, ուսեցք, քաղցիկը (չիլիփէնչէ), սրտից և ստեանց վէրքեր կամ բուրովին կանցին և կամ կը լաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բարխաման, մանաւանդ օգտցաւ (էէ) ըսուած հիւանդութեան: Իւր կազդուրիչ և գորարու ազդեցութեամբը խոյլ (սքրածա) հիւանդութեան ապականիչ գործութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը զիմազրատէ:

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր ատուի վրայ, որ կը գտնուի ամեն դեղափաճաններու քով և մասնատրապէս Պահճէ-գարու թաշ խանի կողմերը Պ. Գրասարեանի դեղարանը Ն. Կ' կը ծախուի:

ՊԵՏՄԱՆԻ ՓՈՒՆՁԻ

- 1. Փունջը ՁՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ օրերը կը հրատարակուի:
- 2. Տարեկան բաժանորդացիինն է միայն չորս արծաթ մէ՛ ճիւղ կանխիկ վրձարելի, թէ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ դատասաց համար:
- 3. Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի:
- 4. Տեղական և դաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ:
- 5. Հատը 1 դրշ մէ՛ ճիւղ, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով:
- 6. Ծանուցման աողը 5 դրուշ է մէկ անդամի համար: Աւելի ատան կըլայ աւելի անդամներու համար:
- 7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տ'օրէն-Տէր Հ. Ս. Արճաճեան Կ. Պօլսոյ Պալլէ-քաղաք Նափիէ խան վերի յարկ թիւ 16:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱՂԱՃԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻՐԱՅԷԼ Կ. ՍԱՐԴԵԱՆ
Մէրճան չարչի Բիւշտի էֆէնտի խանի
սակ թիւ 20